Նման պայմաններում, հաստատված համարելով այն հանգամանքը, որ ծանուցումն Ընկերությանն ուղարկվել է ապաակտիվածցված օգտագիրոջ arazen@arminco.com էլեկտրոնային փոստի հասցեին, Դատարանն այնուամենայնիվ փաստում է, որ դրա արդյունքում Հայցվորի որևէ իրավունք չի խախտվել: Դատարանի մոտ ձևավորվել է այն համոզմունքը, որ խախտումն ըստ էության կրել է ձևական բնույթ, և որ այն որևէ բացասական իրավական հետևանք չի առաջացրել:

Դատարանը փաստում է նաև, որ գնման գործընթացի պատվիրատուներ են հանդիսանում հանրային շահի ապահովմամբ զբաղվող կամ դրան առնչվող սուբյեկտները, ուստի ցանկացած գնման գործընթաց հետապնդում է որոշակի հանրային շահի ապահովման նպատակ:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ Պատասխանողին վերագրվող խախտումը, որը Դատարանի գնահատմամբ կրել է տեխնիկական բնույթ, չի կարող հանգեցնել հանրային շահի ապահովմանն ուղղված գործընթացի տապալման:

Ամփոփելով՝ Դատարանը գտնում է, որ Վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու հիքերը բացակայում են, հետևաբար՝ հայցը ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերը.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ *դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված պետական տուրքը Հայցվորի կողմից վճարվել է նախապես, ինչպես նաև այն, որ հայցը ենթակա է մերժման, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1/. ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱԶԵՆ» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրային կոմիտե» պետական մարմնի՝ թիվ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.10.2023 թվականի նիստի թիվ 4 արձանագրությամբ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱԶԵՆ» Հ/Ձ ՍՊ ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան